ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

06-ը հոկտեմբերի 2011թ.

Քաղաք Իջևան

ՕՐԱԿԱՐԳ

2011թ.հոկտեմբերի 6-ին ժ.10^{00}-ին կայանալիք մարզխորհրդի նիստի

1. **"Առողջ սկիզբ" ծրագրի մուտքը Տավուշի մարզի համայնքներ**

   Զեկ.՝ Ս.Թադևոսյան – "Հույսի կամուրջ" ՀԿ ղեկավար

2. **"Հայաստան" համահայկական հիմնադրամի կողմից Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների համակարգչային դասարանների կահավորման ծրագրի մասին**

   Զեկ.՝ Վ.Փարթամյան – "Հայաստան" համահայկական հիմնադրամի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետ

3. **Տավուշի մարզի համայնքներում 9 ամիսների ընթացքում սեփական եկամուտների կատարման մասին**

   Զեկ.՝ Ռ.Ներսեսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

4. **Մարզպետարանի աշխատակազմի համացանցային կայքի աշխատանքների կազմակերպման մասին**

   Զեկ.՝ Ա.Մելիքսեթյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ

5. **ՀՄՀ-ի ծրագրով իրականացվող ծրագրերի վարկային գումարների վերադարձման մասին**

   Զեկ.՝ Ռ.Ներսեսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

06.10.2011թ. **ք.Իջևան**

Նիստը վարում էր ՀՀ Տավուշի մարզպետ Ա.Ղուլարյանը.
Մարզխորհրդի 63 անդամներից ներկա էին 59-ը:
Նիստին ներկա էին ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալները, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը, մարզպետարանի աշխատակազմի վարչությունների պետեր, բաժինների վարիչներ, մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրեններ և այլն:

1. "ԱՌՈՂՋ ՍԿԻԶԲ" ԾՐԱԳՐԻ ՄՈՒՏՔԸ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

/Զեկ.՝ Ս.Թադևոսյան –"Հույսի կամուրջ" ՀԿ ղեկավար/

Զեկուցողը շնորհավորեց Տավուշի մանկավարժներին՝ ուսուցչի տոնի կապակցությամբ, նշելով, որ նրանք են մեր ապագայի կերտողները: Ս.Թադևոսյանը ներկայացրեց "Առողջ սկիզբ" ծրագրի կարևորությունը՝ հատկապես երեխաների համար: Նա կարևորեց ծրագրի առկայությունը հատկապես գյուղական համայնքներում: Զեկուցողը ներկայացրեց, որ մարզի գրեթե բոլոր դպրոցներում ստեղծված են բոլոր պայմանները երեխաների համար,այն է սենյակներ՝ հագեցված տեխնիկայով, համապատասխան մասնագետներ:Իսկ այն համայնքներում, որտեղ դեռևս չկան նման կենտրոններ,ծրագիրը պատրաստ է աջակցել:

Ավարտելով իր ելույթը, Ս.Թադևոսյանը ներկայացրեց նաև, որ "Առողջ սկիզբ" ծրագիրը ֆինանսավորում է Դանիայի արտգործնախարարությունը և այն պետք է ներկայացվի ՀՀ կառավարության համաձայնեցմանը:

Մարզպետը բոլորի անունից շնորհակալություն հայտնեց տիկին Թադևոսյանին՝ տարիների ընթացքում կատարված աշխատանքների,իրականացված ծրագրերի համար և հավաստիացրեց, որ "Առողջ սկիզբ" ծրագիրը ևս կծառայի իր նպատակին:

2. "ՀԱՅԱՍՏԱՆ" ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

/Զեկ.՝ Վ.Փարթամյան – "Հայաստան" համահայկական հիմնադրամի ծրագրերի և արտաքին կապերի բաժնի պետ/

Զեկուցողը նշեց, որ այս տարի լրանում է հիմնադրամի 20-ամյակը: 20 տարվա ընթացքում իրականացվել է 760 ծրագիր, Տավուշի մարզում 2007թ-ից իրականացվել են մոտ 40 տարբեր ծրագրեր, աշխատել են բոլոր բնագավառներում, հատկապես առողջապահական և կրթական:

Նոր ծրագիրը զեկուցողը կարևորեց նրանով, որ աշխատում են Հնդկաստանի կառավարության հետ, առայժմ ծրագիրն իրականացվելու է Տավուշի մարզում, բայց ցանկություն կա հանրապետության մյուս 9 մարզերում նույնպես այն իրականացնել:

Ծրագիրը բացի համակարգիչներից տրամադրելու է նաև գույք, հետո պետք է վերապատրաստվեն համապատասխան ուսուցիչները:

Վ.Փարթամյանը խոսեց նաև "Թումո" կենտրոնի մասին, որտեղ կարող են հաճախել նաև երեխաներ Տավուշի մարզից:

Մարզպետը իր շնորհակալական խոսքը հայտնեց ծրագրի ղեկավարներին՝ մարզում նման կարևոր ծրագիր իրականացնելու համար:

Առաջարկվեց.

Համայնքների ղեկավարներին.

Աջակցել դպրոցներին՝ համակարգչային սենյակների վերանորոգման գործում:

Հանձնարարվեց.

Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի
և սպորտի վարչության պետ Ա.Փաշինյանին և աշխատակազմի
քաղաքաշինության վարչության պետ Վ.Սարգսյանին.

- Ուսումնասիրել բոլոր դպրոցներում համակարգչային սենյակների առկայությունը, անհրաժեշտության դեպքում միջոցներ ձեռնարկել նոր դասասենյակները կահավորելու ուղղությամբ:

3. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 9 ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ.՝ Ռ.Ներսեսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական
և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ մարզի 62 համայնքների 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ընդհանուր եկամուտների կատարողականը կազմում է 91.1 %, իսկ սեփական եկամուտներինը՝ 76.6%:

Ըստ տարածաշրջանների եկամուտների կատարողականներն ունեն հետևյալ տեսքը.

Իջևանի տարածաշրջան- ընդհանուր կատարողականը կազմում է 90.0 %, իսկ սեփական եկամուտների կատարողականը՝ 77.7 %,

Դիլիջանի տարածաշրջան- ընդհանուր կատարողականը կազմում է 97.5 %, իսկ սեփական եկամուտների կատարողականը՝ 93.3 %,

Բերդի տարածաշրջան- ընդհանուր կատարողականը կազմում է 88.3 %, իսկ սեփական եկամուտների կատարողականը՝ 58.9 %,

Նոյեմբերյանի տարածաշրջան- ընդհանուր կատարողականը կազմում է 90.7 %, իսկ սեփական եկամուտների կատարողականը՝ 74.9 %,

ՈՒսումնասիրությունը ցույց է տալիս, որ թվով 8 համայնքներ ունեն 50 %-ից պակաս սեփական եկամուտների կատարողականներ (Վարագավան 27.1 %, Չորաթան 35.2 %, Սևքար 39.9 %, Լուսաձոր 41.5 %, Դեբեդավան 47.4 %, Նորաշեն 47.9 %, Դովեղ 49.1 %, Վ. Ծաղկավան 49.5 %), թվով 27 համայնքների սեփական եկամուտների կատարողականները 50-80 %-ի սահմաններում են, իսկ 27 համայնքների մոտ կատարողականը բարձր է 80 %-ից:

Ըստ եկամտատեսակների վերլուծությունը ցույց է տալիս, որ ցածր կատարողականներ ունեն հետևյալ համայնքները.

հողի հարկի գծով՝ Վարագավան 13.8 %, Կողբ 24.9 %, Ն.Կ.Աղբյուր 29.8 %, Չորաթան 34.2 %, Վ.Կ.Աղբյուր 37.1 %, Սևքար 44.5 %, Արծվաբերդ 49.3 %, Բաղանիս 51.6 %, Հաղթանակ 54.5 %,

գույքահարկի գծով՝ Հովք 24.2 %, Լուսաձոր 34.6%, Կոթի 40.9 %, Իծաքար 43.6 %, Վ. Ծաղկավան 50.0 %, Նորաշեն 56.9 %,

տեղական տուրքերի գծով՝ Աչաջուր 20.0 %, Այգեհովիտ 20.0 %, Տավուշ 25.5 %, Կողբ 34.2 %,Նորաշեն 44.4 %, իսկ Ենոքավան, Լուսաձոր, Այգեձոր, Արծվաբերդ, Չինչին, Վ. Ծաղկավան, Վ.Կ.Աղբյուր, Դեբեդավան և Լճկաձոր համայնքները ընդհանրապես մուտքեր չունեն,

հողի և գույքի վարձակալությունից վարձավճարներ՝ Վ.Ծաղկավան 3.8%, Զորական 6.5 %, Դեբեդավան 8.7%, Դովեղ 28.3 %, Զորաթան 29.1 %, Դիտավան 38.8 %, իսկ Պառավաքար համայնքը նախատեսված 293.4 հազար դրամի դիմաց մուտքեր չունի:

2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ 2010 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ սեփական եկամուտները պակաս են հավաքագրվել 30.8 մլն. դրամով, որից հողի հարկի գծով 4.8 մլն. դրամ, գույքահարկի գծով 9.7 մլն. դրամ:

Տարեվերջի ավարտին մնացել է երեք ամիս, սկսվել է բերքահավաքը և մեքենաների տեխնիկական զննությունը: Անհրաժեշտ է որպեսզի ցածր կատարողական ունեցող համայնքները ձեռնարկեն կտրուկ միջոցներ մինչև տարեվերջ սեփական եկամուտները հավաքագրելու ուղղությամբ: Նշված համայնքների սեփական եկամուտների ցածր կատարողականները բացասական ազդեցություն կունենա մարզի սեփական եկամուտների ընդհանուր կատարողականի վրա:

Զեկուցողը նշեց, որ իրենց կողմից կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքների կողմից պատշաճ մակարդակով չեն տարվում հողի հարկի և գույքահարկի բազային տվյալների հաշվառումը, որի հետևանքով էլ ապառքների, տույժերի և տուգանքների վերաբերյալ հաշվետվությունները հավաստի չեն:

Գույքահարկի և հողի հարկի բազային տվյալների հաշվառման գործընթացը կազմակերպելու համար մեծ կարևորություն ունի և անհրաժեշտություն է համայնքների միությունների և համայնքների սերտ համագործակցությունը:

Ավարտելով իր զեկույցը, Ռ.Ներսեսյանը նշեց, որ ՀՀ Տավուշի մարզպետարանը պատրաստ է մարզի համայնքներին ցուցաբերելու մեթոդական և խորհրդատվական օգնություն:

<u>Առաջարկվեց.</u>

Համայնքների ղեկավարներին.

- Միջոցներ ձեռնարկել հարկային պարտավորությունները սահմանված ժամկետում կատարելու համար:

4. ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆԿԱՅՔԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ.՝ Ա.Մելիքսեթյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ/

Զեկուցողը ներկայացրեց, որ արդեն մեկ ամիս է գործում է Տավուշի մարզպետարանի համացանցային նոր կայքը, /հասցեն. tavush.gov.am/: Կայքը թեև բաց է և ինտերնետային կապ ունեցող յուրաքանչյուր մարդ կարող է մուտք գործել, սակայն այն լիարժեք դարձնելու համար բավականին աշխատանքներ դեռ պետք է կատարվեն: Նոր կայքը և արտաքին տեսքով, և իր կառուցվածքային ու տեխնիկական հնարավորություններով էապես տարբերվում է նախորդից: Նորը հնարավորություն է տալիս տեղադրել առավել շատ ինֆորմացիա և դա ոչ միայն տեքստային, այլև լուսանկարների, տեսանկարների տեսքով: Կայքն ունի 10-ից ավելի առանձնացված բաժիններ, որոնք էլ իրենց հերթին կազմված են ենթաբաժիններից: Մեծ քանակի տեղեկատվություն է արդեն տեղադրվել, բայց դեռ շատ մեծ քանակություն էլ պահանջվող մակարդակից պակասում է: Չմանրամասնելով մյուս բաժինների աշխատանքը, զեկուցողը նշեց, որ Մարզպետարանի կայքում առանձին բաժնով ներկայացված են համայնքները, իսկ համայնքներին հատկացված բաժինը կազմված է հետևյալ 9 ենթաբաժիններից:

Զեկուցողը նաև նշեց, որ համայնքի ղեկավարը պարտավոր է պարբերաբար հաշվետվությամբ հանդես գալ հանրության առջև իր կատարած աշխատանքների վերաբերյալ՝ հաշվետվությունների մեկ օրինակը ուղարկելով մարզպետարան: Պահանջվող բոլոր որոշումները, տեղեկատվությունը պետք ներկայացվեն սկսած 2011 թվականի սկզբից՝ հունվար ամսից:
Ավարտելով իր ելույթը,զեկուցողը հիշեցրեց նաև, որ համայնքների ղեկավարները ուշադրություն դարձնեն համայնքներում տեղադրված տեղեկատվական ցուցատախտակների, դրանցում տեղեկատվության պարբերաբար թարմացման աշխատանքներին:

Առաջարկվեց.

Համայնքների ղեկավարներին.

1. Ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել համացանցում տեղադրվող նյութերը, պարբերաբար թարմացնել դրանք:
2. Այն համայնքները, որոնք դեռևս չեն օգտվում համակարգչային տեխնիկայից և համացանցից, անհրաժեշտ է, որ հնարավորինս սեղմ ժամկետում ձեռք բերեն անհրաժեշտ տեխնիկական միջոցները:

Հանձնարարվեց.

Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և
հասարակայնության հետ կապերի բաժնի վարիչ Ա.Մելիքսեթյանին.

- Պարբերաբար զեկուցել համայնքներում տեղադրված ցուցատախտակների և կայքի նյութերի թարմացման մասին:

5. ՀՄՀ-ի ծրագրով իրականացվող ծրագրերի վարկային գումարների վերադարձման մասին

/Զեկ.՝ Ռ.Ներսեսյան – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական
և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ/

Զեկուցողը ներկայացրեց, որ մարզի Աչաջուր, Լուսաձոր, Սևքար, Հաղթանակ, Կողբ համայնքները ոռոգման ջրանցքների վերակառուցման նպատակով ստացել են փոխառություն 21986.0 հազար դրամի: 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ հետ վերադարձված գումարները կազմել են 4552.0 հազար դրամ: Վերլուծությունը ցույց է տալիս, որ համայնքները նշված գումարների մարումը նախատեսել են 4-րդ եռամսյակում: Անհրաժեշտ է ձեռնարկել կտրուկ միջոցներ սեղմ ժամկետում փոխառության կարգով ստացած գումարը հետ վերադարձնելու նպատակով (կցվում է տեղեկանքը):

Հանձնարարվեց.

Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական
զարգացման վարչության պետ Ռ.Ներսեսյանին.

- Համայնքների հետ աշխատանքներ տանել փոխառնության կարգով ստացված գումարները սահմանված ժամկետում ետ վերադարձնելու ուղղությամբ:

ՄԱՐԶՊԵՏ Ա.ԴՈՒԼԱՐՅԱՆ